ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2013 թվականի N 304-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54 հոդվածի 3-րդ մասի, <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի՝ **որոշում եմ.**

1. Հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը չկանխելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր գյուղական համայքի ղեկավար Գևորգ Հայրապետյանին նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհինգապատիկի չափով:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի/մարզային հողային պետական տեսչության/ պետ Լևոն Պետրոսյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ